

# ՄԱՐԴՈՒ, ԵՐԸՋՆԵՐԻ ԵՒ ԱՏՏՈՒԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ո՛վ աստածային խանդավառութիւն,

Դու իմ երագուած գերեզմանն ես,  
Ես զգում եմ սեռ ներկայութիւնդ

Երկինքների մէջ

Ու ես լսում եմ մեզմ էս մրմուռը

Գիշերների խաւարում .

Որովհետեւ գիշերով է, որ աստուածները

Իջնում են մեր մէջ ու ապրում մեզ հետ :

Եւ իրապէս, ի՞նչ է մութն ու գիշերը, թէ  
ոչ կրկնուող, հսկայ՝ մի երագ,

Ուր ոգիները վառում են յաճախ

Յաղթակա՛ն ջահեր մեր հոգիներում,

Ուր հարբեցումը կրակի պէս հասում է

հագուց հոգի, հրակից երակ

Եւ ուր պէտք չունի Մարդը իւր աջին՝

տեսնելու համար .

Մութի մէջ միայն պէտք է երագել,

Որովհետեւ կոյր են հրեշտակները,

Եւ աստուածները չեն սիրում մերկութիւնն

իրենց . . .

\*\*\*

Եւ կար ժամանակ, երբ Մարդը

ապրեց ու սիրեց աստուածների պէս .

Մարդիկ բարձրացան երկինքների մէջ,

Եւ այդ ժամանակ մարդ-աստուածները

սկսեցին ծնուել .

Հօր, գեղեցիկ ու հրաշալիօրէն մարդկային :

Կուսական առաջատները,

Գիշերային գիրգ երագանքի մէջ

սպասում էին երկնային փեսաների,

Ու մայրերը յոյի էին կիսաստուածներով . . .

Եւ երբ գիշերը վառում էր իւր ջահերը հարբած,

Դիցուհիները իջնում էին լուս ամբաների

վրայ

Ու խաւարի մէջ հնչում էր ճայնը

նրանց ճայլերի . . .

Ու յետոյ այդ բոլորը փոխուեց մի

հէ՛հեաթի, ու յետոյ զարձաւ մի երագ :

Մարդիկ չհաւատացին հէ՛հեաթին ու

ծիծաղեցին երագի վերայ . . .

\*\*\*

Հէ՛հեաթը դարերի երագանքն է :

Մարդիկ չեն կարող հաւատալ նրան,

Քանի որ հոգին չունի իւր վեհուփիւնը  
 Երբեմնի  
 Ու սրտերի մէջ թագաւորում է վախը դեւերի :  
 Ի՞նչպէս կարող է Մարդը հաւատալ  
 Իրաշալի ու վեհ իւր մեծութեանը,  
 Քանի Աստուածը անարկու է,  
 Ամենագոր Եւ աննանայելի,  
 Ի՞նչպէս կարող է Մարդը հաւատալ  
 Երազներին իւր վազեմի ու եին,  
 Քանի որ միակ, Աստուածը միակ,  
 Վառել է անա խարայկը գեհեմի  
 Անհունութեան մոխիրների վրայ :

\*\*\*

Բամաստեղծները միայն կարող են հաւատալ  
 Էէֆեսաթին ու ապրել երագով,  
 Միայն նրա՛նք կարող են տեսնել  
 Իրեշտակները ու խօսել նրանց հետ :  
 Չէ՞ որ նրանք ունեն խենդերի ուղեղն  
 Ու երեխայի հոգին :

\*\*\*

Մարդկային հագու անյառակ խորհից,  
 Ուր բնագոյների տարօրինակ մթնշաղն է  
 թագաւորում,  
 Աստուածային օրերի այդ եթերային մեղեդին  
 (Երբեմն, խենդութեան, ինճամուռացման  
 մի վայրկեանի,)   
 Գարերի միջից լողում է որպէս  
 անդնդատոյգ մի զօզանջ  
 Ու գերբնական լոյսի պէս վառում  
 ընտրեալի աչքերում :  
 Այդպիսի մի վայրկեան հաւատար է  
 յախտեականութեան :

\*\*\*

Կոյրերը ազօթում են լոյսի համար,  
 Ու մենք խենդերս ազօթում ենք  
 Աստուածներին :  
 Այնինչ լոյսը կոյրերի հագումն է, ու  
 աստուածները նորածինի երակների մէջ :

ԶՕՐԱ Յ . ՄԻՐԶԱՅԵԱՆ

Նոր-Ջուլայ, Իրան